



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ
*N1(75) դեկտեմբերի 21 – հոււ նվարի 20***

16 փետրվարի 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորոգյալ ակտներ	2
1.1 ՀՀ օրենքներ	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ	8
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ	9
2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ	9
2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննության ակտներ	9
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ	10
2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ	12

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորոգյալ ակտներ

1.1 ՀՀ օրենքներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
------------	--

Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՅՕ-221-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	31.12.2014 և տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագող (ծագած) հարաբերություններին վրա

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված լրացման համաձայն, հստակեցվել է, որ ՀՀ տարածքով օտարերկրյա պետության տարածք մատուցվող **ինտերնետի տարանցիկ փոխադրման** ծառայությունների համար **ծառայության մատուցման վայր է** համարվում այդ օտարերկրյա պետության տարածքը:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՅՕ-224-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն, 2013 թվականի արդյունքներով մինչև 10.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար փոքր տնտեսավարող սուբյեկտների համար նոր սերնդի **հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման ժամկետը** 2015 թվականի հունվարի 1-ից հետագվել մինչև **2016 թվականի հունվարի 1-ը**:

Փաստաթուղթ	«Շահույթահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՅՕ-246-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	09.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումների համաձայն, սահմանվել է, որ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտների կողմից հավաստագրի գործողության ժամկետում **տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները** «Շահույթահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով **եկամուտ չեն**

համարվում, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտների ստացման հետ կապված ծախսերը ծախս չեն համարվում:

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՀՕ-248-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	09.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումների համաձայն, սահմանվել է, որ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողների կողմից հավաստագրի գործողության ժամկետում **տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները**, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտվում են որպես **նվազեցվող եկամուտներ**, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող **եկամուտների ստացման հետ կապված ծախսերը ծախս չեն համարվում:**

Միաժամանակ, սահմանվել է, որ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալը հավաստագրի գործողության ժամկետում աշխատողներին վճարվող **աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տկոս դրույքաչափով:**

Փաստաթուղթ	«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՀՕ-241-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	02.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքի մշակումը պայմանավորված է **Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության շրջանակներում առանձին մաքսային հարաբերությունները ՀՀ օրենսդրությամբ կարգավորելու անհրաժեշտությամբ:**

Սույն օրենքով կարգավորված են Եվրասիական տնտեսական միությունում գործող միասնական մաքսային օրենսգրքով չկարգավորված առանձին մաքսային հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվել են ՀՀ սահմանով ապրանքների

տեղափոխման, մաքսային հսկողության ներքո դրանց փոխադրման, ժամանակավոր պահպանության, մաքսային հայտարարագրման, բաց թողնման, մաքսային ընթացակարգերին համապատասխան ասրանքների օգտագործման, մաքսային հսկողության իրականացման, մաքսային վճարների վճարման, ինչպես նաև մաքսային մարմինների և այդ ասրանքների նկատմամբ տիրապետման և/կամ օգտագործման և/կամ տնօրինման իրավունքներ ունեցող անձանց միջև հարաբերությունները:

Հարկ է նշել, որ այս օրենքի ընդունմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ 2000թ. հունիսի 6-ի մաքսային օրենսգիրքը՝ բացառությամբ օրենսգրքի մի շարք դրույթների, որոնք որոշակի ժամանակահատված շարունակելու են գործել սույն օրենքով սահմանված կարգավորումներին գուժահեռ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՀՕ-242-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	02.01.2015

Համառոտ նկարագիր

Հաշվի առնելով 02.01.2015թ. ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին 2014 պայմանագիրը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության մասին 2014 պայմանագրի անբաժանելի մաս համարվող 18-րդ հավելվածով սահմանված ԵԱԿԻ արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի և դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին արձանագրության դրույթները՝ սույն օրենքով սահմանվել են Եվրասիական տնտեսական միությունում գործող միասնական մաքսային օրենսգրքով, ինչպես նաև նշված արձանագրությամբ **ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ ներմուծումների և ՀՀ-ից ԵՏՄ անդամ երկրներ արտահանումների իրականացման դեպքերում անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման կարգին վերաբերող առանձնահատկությունները:**

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՀՕ-243-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	02.01.2015

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ ապրանքների արտահանման, ԵՏՄ անդամ պետություններին Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) անձանց կողմից ԵՏՄ տարածքում այլ՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) անձանց (կամ հակառակը) ծառայությունների մատուցման դեպքերում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» թիվ 18 հավելվածով ներկայացված արձանագրությամբ, եթե «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով առանձնահատկություններ նախատեսված չեն:

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՀՕ-244-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	02.01.2015

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության` Եվրասիական տնտեսական միությանը անդամակցությանը պայմանավորված, ինչպես նաև հիմք ընդունվելով ԵՏՄ մաքսային միասնական օրենսգրքի, «Մաքսային կարգավորումների մասին» ՀՀ օրենքի, 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող` «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» թիվ 18 հավելվածի դրույթները, համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2014թ, ՀՕ-274-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է	01.10.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումով սահմանվել է.

գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքից հարկ վճարողի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունք ձեռք բերելուն ուղղված հարկային մարմնի կողմից իրականացվող գործողությունն է: Սահմանափակումը կիրառվում է հարկ վճարողի շարժական գույքի նկատմամբ հարկային պարտավորությունների չափով:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փյացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ շարժական գույքը, ապա հարկային մարմնի ղեկավարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի շարժական գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին հանձնարարագիր հրատարակել:

Հարկային մարմնի կողմից գույքի սահմանափակումը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Սահմանափակումը կիրառվում է միայն այն շարժական գույքի նկատմամբ, որն անհրաժեշտ է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն

ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով: Սահմանափակումը կիրառվում է հարկ վճարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Սահմանափակումը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել:

1.2.33 կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկ վճարողների կարգն ու ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու վերաբերյալ հաշվետվության ձևը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 1104-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը համարը	և 25.12.2014թ, N 1501-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 74 (1087), 27.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015թ

Համառոտ նկարագիր

⑥Ավելացված արժեքի հարկի մասին ⑦ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ⑦ՀՀ օրենքի (22.06.2014թ. ՀՕ-129-Ն) դրույթներին համահունչ՝ սույն որոշմամբ սահմանվել են ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարության ձևը:

Ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» N 1104-Ն որոշումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունից եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական գրանցամատյանում, ինչպես նաև եվրասիական տնտեսական միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից վարվող մտավոր սեփականության օբյեկտների մաքսային գրանցամատյանում գրանցված ապրանքային նշաններով մակնշված ապրանքների առաքման սահմանափակումների հսկողության կարգը և տեղեկացման թերթիկի ձևը հաստատելու մասին»
------------	---

		ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը համարը	և	25.12.2014թ, N 1525-Ն
Հրատարակումը		ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (1089), 30.12.2014թ
Ուժի մեջ է		02.01.2015թ

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է ՀՀ-ից Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական գրանցամատյանում, ինչպես նաև միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից վարվող մտավոր սեփականության օբյեկտների մաքսային գրանցամատյանում գրանցված ապրանքային նշաններով մակնշված ապրանքների առաքման սահմանափակումների հսկողության կարգը, տեղեկացման թերթիկի ձևը:

1.3 Պաշտոնական արգասնումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 26-ի N 197-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	02.12.2014թ, N 858-Ն
Հրատարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 33 (512), 26.12.2014թ.
Ուժի մեջ է	05.01.2015

Համառոտ նկարագիր

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-67-Ն) ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան փոփոխություններ են կատարվել «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի» ձևում:

2.Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

2.1 Այնպիսի գանգատարկումների և ծառայողական քննությունների

2014 թ-ի դեկտեմբերի 20-ից մինչև 2015 թ-ի հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 38 որոշում, որից բավարարվել է 16, բավարարվել է մասնակի 2, մերժվել է 14, կասեցվել է 6:

2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ¹

Հ/Հ	Ցուցանիշ	Չափանմիավոր	2014թ.		
			դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-դեկտեմբեր) % ²
1	ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	92,141.5	1,058,079.4	105.9
1.1	Հարկային եկամուտներ, թվում՝	մլն դրամ	83,166.5	1,018,797.6	104.8
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	29,858.4	440,361.4	111.0
1.1.2	Շահույթահարկ	մլն դրամ	1,865.5	103,597.4	83.1
1.1.3	Եկամտային հարկ ³	մլն դրամ	30,933.4	301,549.9	109.9
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	6,218.2	50,560.4	162.9
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	982.4	15,638.6	116.7

¹ Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

² Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ

³ Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները

1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	569.5	6,690.0	97.9
1.1.7	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	207.6	3,178.5	28.8
1.1.8	Մաքսատուրք	մլն դրամ	2,460.2	48,397.1	109.3
1.1.9	Այլ հարկային եկամուտներ ⁴	մլն դրամ	10,071.3	48,824.3	69.9
1.2	Պետական տուրք	մլն դրամ	8,975.0	39,281.8	144.0
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	240 523	2 468 612	101.2
2.1	Արտահանում	մլն դրամ	60 782	627 051	103.6
2.2	Ներմուծում	մլն դրամ	179 741	1 841 561	100.4

⁴ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջե հաշվեգրվող), բնապահպանական և բնօգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարզեցված հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների մասով), բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդիների համար քվոտան)

2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ. դեկտեմբեր
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1319
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1018
1.2	Իրավաբանական անձ	հատ	301
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	6 264
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	166
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	1,901.2
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2014թ. հունվար-դեկտեմբեր 18365
5.1	Բավարարված	հատ	1506
5.2	Մերժված	հատ	48
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	9329
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	12.451,0

7	Վարչական նշանակելու որոշումների թիվ	տույժ մասին	հատ	29927
7.1	Վարչական նշանակելու որոշումների փաստացի գումարներ	տույժ մասին համաձայն գանձված	մլն դրամ	601,3
8	Չարկ վճարողների վրա արգելադրումների թիվ	գույքի դրված	հատ	3157
8.1	Չարկ վճարողների արգելադրումների փաստացի գումարներ	գույքի դրված գանձված	մլն դրամ	10.381,1
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչություն կողմից հարուցված քրեական գործերի թիվ		հատ	196
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչություն կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ		մլն դրամ	1.950,0
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում`		հատ	722
10.1	Ավարտված		հատ	37
10.2	Մեղադրական եզրակացություն և դատարանի որոշումներ		հատ	37
10.3	Կասեցված		հատ	27
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ		մլն դրամ	2.911,7